

ԳԻՏԱՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՀԵՂԱՓՈԽՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ
ԱՐՏԱԿՐՈՒԹՅԱՆ ԱՐԿՈՒՆԱՎԵՏՈՒԹՅԱՆ ԲՍԻՉՄԱՑՈՒՄԸ

Վ. ՀՈՎՍԵՓՅԱՆ

Ժամանակակից գիտատեխնիկական հեղափոխության պայմաններում հասարակական արտադրության արդյունավետության հետագա բարձրացումը կոմունիզմի կառուցման արմատական հարցերից է: ՍՄԿԿ XXV համագումարն ընդգծեց, որ «երկրի առջև կանգնած տնտեսական և սոցիալական բազմազան խնդիրները հաջողությամբ լուծելու համար այլ ուղի չկա, բացի աշխատանքի արտադրողականության արագ աճից, ամբողջ հանրային արտադրության արդյունավետության խիստ բարձրացումից» (1, էջ 70):

Աշխատանքի արտադրողականության բարձրացումից կախված է հասարակական ընդլայնված վերարտադրության տեմպերի արագացումը: Հայտնի է, որ ընդլայնված վերարտադրությունը կարող է իրականանալ երկու ձևով՝ էքստենսիվ, երբ արտադրության աճը իրականացվում է անփոփոխ տեխնիկական հիմքի վրա և ամբողջությամբ պայմանավորված է աշխատանքային ու նյութական միջոցների ծախսումներով՝ աշխատանքի արտադրողականության նախնական մակարդակի պայմաններում, և ինտենսիվ, երբ արտադրությունն ընդլայնվում է տեխնիկայի և տեխնոլոգիայի կատարելագործման հիման վրա, երբ վճռական նշանակություն են ձեռք բերում կենդանի և առարկայացված աշխատանքի ավելի արդյունավետ ծախսումը, աշխատանքի արտադրողականության բարձրացումը: Ինտենսիվ վերարտադրության դեպքում հասարակական արտադրության զարգացումը տեղի է ունենում արտադրության միջոցների աճի ու կատարելագործման, աշխատանքի տեխնիկական զինվածության և աշխատուժի ավելի արտադրողական օգտագործման շնորհիվ:

Գործնականում զուտ էքստենսիվ կամ ինտենսիվ վերարտադրություն գոյություն չունի: Դրանք գոյություն ունեն միաժամանակ, սերտորեն կապված են միմյանց և միահյուսված են: Խոսելով վերարտադրության ընդլայնման այս կամ այն ձևի մասին, նկատի է առնվում, թե դրանցից որն է տիրապետողը, գերակշռողը:

Սոցիալիստական ընդլայնված վերարտադրության թափն ու ծավալը կախված են գիտատեխնիկական առաջադիմության աստիճանից: Հետևաբար, սոցիալիստական վերարտադրության ինտենսիվ բնույթը գնալով ավելի կուժեղանա:

Սովետական իշխանության առաջին տարիներին Վ. Ի. Լենինը արտադրության լայն չափերով մեքենայացումը համարում էր աշխատանքի արտադրողականության բարձրացման, ընդլայնված վերարտադրության ինտեն-

սիվ ձևերի կիրառման վճռական միջոց: Նա գրում էր. «Հարկավոր են ամենուրեք ավելի շատ մեքենաներ մտցնել, որքան կարելի է անցնել ավելի լայն շահերով մեքենայական տեխնիկայի գործադրմանը» (3, էջ 646), Վ. Ի. Լենինի այս ցուցումը հետևողականորեն իրականացվեց մեր տնտեսության զարգացման ամբողջ նախորդ ժամանակաշրջանում:

Սոցիալիստական ընդլայնված վերարտադրությունը ներկայումս թևակոխել է մի նոր փուլ, երբ տնտեսական զարգացման գլխավոր գործոնը դառնում է հասարակական արտադրության համակողմանի ինտենսիվացումը: Ժողովրդական տնտեսության զարգացման արագ տեմպերի պայմաններում առաջին պլան են մղվում արտադրության բարձր տեխնիկական մակարդակը և նյութական ու աշխատանքային ծախսումների տնտեսական արդյունավետությունը քարձրացնելու անհրաժեշտությունը:

Արտադրության ինտենսիվ զարգացումը պայմանավորված է մի շարք օբյեկտիվ պատճառներով:

Նախ արտադրության էքստենսիվ զարգացման գործոնների (աշխատուժի քանակը, կապիտալ ներդրումները) աճը անսահմանափակ չէ: Այսպես, վերջին տարիներս մեր երկրի տնտեսության զարգացումը տեղի է ունենում աշխատանքային ռեսուրսների հաշվեկշռի խիստ լարված պայմաններում, մի շարք տնտեսական շրջաններ, ճյուղեր, ձեռնարկություններ ապահովված չեն համապատասխան քանակի աշխատանքային ռեսուրսներով: Հայտնի է, որ ամբողջ ժողովրդական տնտեսության համար լրացուցիչ աշխատանքային ռեսուրսների հիմնական աղբյուրը աշխատունակ բնակչության աճն է: Սակայն ինչպես Միության մասշտաբով, այնպես էլ մեր հանրապետությունում ներկայումս նկատվում է բնակչության բնական աճի տեմպերի կրճատում: Այսպես, եթե Միությունում 1000 մարդու հաշվով բնակչության աճը 1940 թ. կազմել է 13,2 տոկոս, ապա 1965 թ.՝ 11,1, 1970 թ.՝ 9,2, 1973-ին՝ ընդամենը 8,9 տոկոս: Մեր հանրապետությունում այդ ցուցանիշը կազմել է 1940 թ.՝ 27,4, 1965-ին՝ 22,9, 1970-ին՝ 17,0, 1973 թ.՝ 16,91 (տե՛ս 7, էջ 51): Բնակչության բնական աճի տեմպերի նվազման պատճառը ծննդի կրճատումն է:

Այնուհետև մեր տնտեսության զարգացման տարբեր ժամանակաշրջաններում հասարակական արտադրության մեջ զբաղվածության աճի աղբյուր է հանդիսացել տնային և անձնական-օժանդակ տնտեսությունը, որտեղից, օրինակ, VII հնգամյակում հասարակական աշխատանքի բնագավառն է ներգրավվել 10 միլիոն, իսկ VIII հնգամյակում՝ 4 միլիոն մարդ: Եթե 1959 թ. տնային և անձնական օժանդակ տնտեսություններում զբաղված էր 17,9 միլիոն մարդ, ապա 1970 թ.՝ ընդամենը 5,9 միլիոն (տես 6, էջ 37): Ներկայումս աշխատանքային ռեսուրսների համալրման այս աղբյուրը գրեթե սպառվել է:

Արտադրության ինտենսիվ զարգացումը պայմանավորված է նաև ժամանակակից արտադրության միջոցների բնույթով և զարգացման մակարդակով: Ժամանակակից բարձր արտադրողական արտադրության միջոցների պատրաստումը պահանջում է հասարակական աշխատանքի մեծ ծախսումներ: Բացի այդ, ժամանակակից արտադրության միջոցների օգտագործման բնագավառում տեղ գտած թերբեռնվածությունը, աշխատաժամանակի կորուստները, աշխատանքի անհամաչափությունը, շինարարության ժամկետ-

ների ձգձգումը նյութական զգալի վնասներ են պատճառում մեր հասարակությանը:

Այսպիսով, արտադրության զարգացման էքստենսիվ ուղին կհասցնի այն բանին, որ ժամանակակից արտադրության միջոցների նման օգտագործումը չի ապահովի աշխատանքի արտադրողականության և արտադրության արդյունավետության բարձրացման անհրաժեշտ մակարդակ, և նրանց վրա կատարված ծախսերը կարգելակեն մեր տնտեսության հետագա զարգացումը: Իսկ թե ինչ չափով է արդյունավետ տեխնիկայի և նյութերի օգտագործման ինտենսիվ ուղին, կարելի է համոզվել հետևյալ օրինակով. արդյունաբերական արտադրանքի աճի մեկ տոկոսը նշանակում է նրա ծավալի մեծացում: ավելի քան 5 միլիարդ ռուբլով, կամ 1,4 անգամ ավելի, քան իններորդ հընգամյակում և 2,1 ավելի, քան ութերորդ հնգամյակում (4, էջ 26):

«Ճիշտ հաշվել և արդյունավետ օգտագործել յուրաքանչյուր ռուբլին, աշխատանքի յուրաքանչյուր ժամը, արտադրանքի յուրաքանչյուր տոննան, մինչև վերջ արմատախիլ անել անտնտեսվարությունն ու թափփփվածությունը, — նշել է Լ. Ի. Բրեժնևը ՍՍՀՄ XXV համագումարում, — սա մեր վսեմ կուսակցական պարտքն է, որովհետև մենք խնայողություն ենք անում հանուն մեզ համար ամենաթանկ բանի՝ հանուն հայրենիքի հարստության և հզորության, մեր ժողովրդի բարեկեցության ու բարգաւաճման» (1, էջ 73):

Նախատեսվում է ՍՍՀՄ ժողովրդական տնտեսության զարգացման X հնգամյակի պլանավորված ցուցանիշները ձեռք բերել կապիտալ ներդրումների աճի ավելի պակաս տեմպերով, քան նախորդ հինգ տարում: Կապիտալ ներդրումների ծավալը X հնգամյակում զգալի է՝ 630 միլիարդ ռուբլի, բայց դրանք IX հնգամյակի 42 տոկոսի դիմաց կավելանան 24—26 տոկոսով: Ինչպես նշում է ընկեր Լ. Ի. Բրեժնևը, այժմ շեշտը դրվում է գործող սարքավորումների կարողությունների ավելի լրիվ օգտագործման վրա, որը կազմում է ժողովրդական տնտեսության ինտենսիվացման գիծը (1, էջ 73—74):

Արտադրության ինտենսիվ զարգացումը պայմանավորված է սոցիալիզմի և կապիտալիզմի տնտեսական մրցությանը, որի գլխավոր օղակը գիտատեխնիկական հեղափոխությունն է: Այս տեսակետից կարևոր է աշխատանքի արտադրողականության բարձրացումը կազմակերպչական-տնտեսական և գիտատեխնիկական միջոցների հաշվին: Չնայած ներկայումս Սովետական Միությանը արտադրական ռեսուրսների գրեթե բոլոր գլխավոր ցուցանիշների տեսակետից անցել է Միացյալ Նահանգներից, բայց դեռևս էականորեն ետ է մնում դրանց օգտագործման բնագավառում: Վերցնենք, օրինակ, գյուղատնտեսությունը: Այսպես, մեր գյուղատնտեսության մեջ կապիտալ ներդրումները 10—15 տոկոսով ավելի են, քան Միացյալ Նահանգներում, սակայն աշխատանքի արտադրողականությունը մեզ մոտ 4—5 անգամ ցածր է, քան Միացյալ Նահանգներում (տես 8, էջ 6): Դրա համար էլ մեր երկրում առաջնակարգ նշանակություն է ստացել կուտակված հսկայական տնտեսական կարողությունների օգտագործման արդյունավետության աստիճանի բարձրացումը: Այս բնագավառում վճռական դերը պատկանում է ժամանակակից գիտատեխնիկական հեղափոխությանը:

Ներկայումս, երբ գիտությունն էլ ավելի է վերաճում անմիջական արտադրողական ուժի, գլխավորը ոչ թե նրա առանձին նվաճումներն են, այլ արտադրության բարձր գիտատեխնիկական մակարդակը:

ՍՍՀՄ ժողովրդական տնտեսության զարգացման 1976—1980 թթ. հիմ-

նական ուղղութիւններում նշվում է, որ «երկրի ինչպես ընթացիկ, այնպես էլ ավելի տևական զարգացման շահերը պահանջում են համակողմանիորեն ինտենսիվացնել արտադրությունը, արագացնել գիտատեխնիկական առաջադիմությունը, բարձրացնել աշխատանքի արտադրողականությունը, որոնք արտադրութան արդյունավետութան և բնակչության կենսամակարդակի բարձրացման վճռական գործոններ են: Խոսքը վերաբերում է նախ և առաջ այն բանին, որ մեծանա նյութական, աշխատանքային և ֆինանսական ռեսուրսների յուրաքանչյուր միավորի հատուցումը, արդյունավետորեն օգտագործվեն արտադրական ֆոնդերը. ...Վերջին հաշվով այդ հարցերի լուծումը ամենագլխավորն է տասներորդ հնգամյակի առաջադրանքների հաջող կատարման համար» (4, էջ 29):

Ինտենսիվացման ուղիով արտադրությունը զարգացնելու համար անհրաժեշտ է ժամանակակից գիտատեխնիկական հեղափոխության նվաճումները օրգանապես զուգակցել տնտեսութան սոցիալիստական համակարգի առավելությունների հետ:

Հանրային արտադրության արդյունավետության բարձրացման և տնտեսության տևական զարգացման հեռանկարները որոշող գիտատեխնիկական հեղափոխության ուղղութիւններին պետք է առանձնացնել:

Առաջին. աշխատանքի գործիքների արտադրության մեջ մեքենաների և ագրեգատների միավորային կարողությունների աճը, առանձին մեքենաների ստեղծումից և արմատավորումից անցումը տեխնոլոգիական ամբողջ պրոցեսը լիովին ընդգրկող մեքենաների համակարգերի մշակմանն ու արմատավորմանը, արտադրության աշխատատար տեսակների մեքենայացմանն ու ավտոմատացմանը:

Երկրորդ. տեխնոլոգիական պրոցեսների կատարելագործման բնագավառում՝ քիչ գործողություններ պահանջող առաջադիմական տեխնոլոգիայի (օրինակ, ոչ-դրամեյան մետալուրգիայի, անիլիկ մանելու և անմաքոք գործելու) և այնպիսի տեխնոլոգիայի զարգացումը, որ առավելագույն չափով տնտեսում է էլահումքը, վառելիքը, նյութերը և ապահովում շրջակա միջավայրի պահպանումը:

Երրորդ. էներգետիկայում՝ ատոմային էլեկտրաէներգետիկայի արագ զարգացումը, հիդրոէլեկտրակայանների (հաշվի առնելով տոտզման վարիքները) և էժան ածուխով աշխատող գերհզոր ջերմաէլեկտրակայանների կառուցումը, խոշոր, առավել խնայողական տուրբազեններատրոնների ստեղծումը:

Չորրորդ. նյութերի արտադրության մեջ՝ որակավոր պողպատների արտադրության ավելացումը, առանձնապես էլեկտրախարամային և վակուումային վերածուլման մեթոդներով, գլանվաճառի տեսականու ընդլայնումը, կոնստրուկցիոն նյութերի ընդհանուր ֆողարկման մեջ ալյումինի, տիտանի, պոլիմերների քաժնի մեծացումը, նախապես տրված հատկություններով սինթետիկ նյութերի արտադրությունը:

Ինչպես նշվեց, հասարակական արտադրության արդյունավետության բարձրացման վճռական միջոցը աշխատանքի արտադրողականության բարձրացումն է:

Հասարակական աշխատանքի արտադրողականության անշեղ աճը արտադրության սոցիալիստական եղանակի մեծագույն առավելությունն է: Սոցիալիզմի ժամանակ քացառված են արտադրության օբյեկտիվ և սուբյեկտիվ գործոնների միջև կապիտալիզմի պայմաններում գոյություն ունեցող

հակասությունները: Արտադրության միջոցների հասարակական սեփականության պայմաններում մարդիկ շահագրգռված են իրենց աշխատանքի արտադրողականության բարձրացմամբ, քանի որ՝ ինչպես ամբողջ հասարակության, այնպես էլ յուրաքանչյուր անհատի բարեկեցության մակարդակը: ուղղակիորեն կապված է նյութական արտադրության ոլորտի աշխատողների աշխատանքի արդյունավետության աստիճանից: Այսպես, 1951—1973 թթ. հասարակական աշխատանքի արտադրողականությունը Սովետական Միությունում աճել է 5,6 անգամ, իսկ Միացյալ Նահանգներում՝ ընդամենը 3,5 անգամ: Այդ նույն ժամանակաշրջանում ՍՍՀՄ և ԱՄՆ արդյունաբերության մեջ աշխատանքի արտադրողականությունը աճել է համապատասխանաբար 6,2 և 3,5 անգամ (7, էջ 134—135):

ՍՍՀՄ ժողովրդական տնտեսության զարգացման 1976—1980 թթ. հիմնական ուղղություններում նախատեսվում է աշխատանքի արտադրողականությունը բարձրացնել 27 տոկոսով, 1971—1975 թթ. 23 տոկոս աճի դիմաց: Դա հավասարազոր է 26 միլիոն աշխատողների աշխատանքի տնտեսման (4, էջ 32): Այսինքն՝ ներկայումս աշխատանքի արտադրողականության բարձրացման յուրաքանչյուր մեկ տոկոսը մոտավորապես հավասար է մեկ միլիոն աշխատողների աշխատանքի տնտեսմանը: Այս խնդիրը լուծելու համար X հնգամյակում նախատեսվում է աշխատանքի ֆոնդազինվածությունը արդյունաբերության մեջ բարձրացնել 37 տոկոսով, իսկ գյուղատնտեսության մեջ՝ 57 տոկոսով: Հանրային աշխատանքի արտադրողականության բարձրացման հաշվին պետք է ստացվի ազգային եկամտի աճի 85—90 տոկոսը:

Արտադրական պրոցեսների մեքենայացումը և ավտոմատացումը, ժողովրդական տնտեսության էլեկտրիֆիկացումը և քիմիացումը արտադրության աշխատողներից ավելի մեծ չափերով պահանջում են ինչպես ընդհանուր, այնպես էլ մասնագիտական՝ ինժեներատեխնիկական և ազրոնոմիական գիտելիքների բարձր մակարդակ: Ց. Էնգելսը գրել է. «Ինչպես անցյալ դարում գյուղացիները և մանուֆակտուրաների բանվորները խոշոր արդյունաբերության մեջ նեգրավվելուց հետո արմատապես փոխեցին իրենց ամբողջ կենսաձևը և իրենք բոլորովին այլ մարդիկ դարձան, ճիշտ նույնպես էլ ամբողջ հասարակության ուժերով արտադրության ընդհանուր վարումը և արտադրության՝ այստեղից բխող նոր զարգացումը բոլորովին այլ մարդկանց կարիք կունենա և կստեղծի նրանց» (2, էջ 33):

Ինտենսիվ վերարտադրության զարգացման ընթացքում, երբ արտադրության բոլոր ճյուղերում գիտատեխնիկական առաջադիմությունը հրամայաբար պահանջում է աշխատողների կուլտուր-տեխնիկական բարձր մակարդակ, բացառիկ նշանակություն է ստանում հանրակրթական ու տեխնիկական գիտելիքների ձեռքբերումն ու խորացումը: Բանվորների ու կուլտնտեսականների կուլտուր-տեխնիկական մակարդակի ձևավորման և բարձրացման հիմքը նրանց ընդհանուր կրթական մակարդակի բարձրացումն է: Չեռք բերելով գիտելիքներ բնության և հասարակության մասին, նրանք հնարավորություն են ստանում բարձրացնելու իրենց որակավորումը: Բավարար չափով հանրակրթական գիտելիքներն աշխատավորին անհրաժեշտ են ոչ միայն նրա լիարժեք կյանքի ու բազմակողմանի զարգացման, այլև արտադրական գործունեությունը կազմակերպված ձևով անցկացնելու համար: Այս կապակցությամբ Կ. Մարքսը գրել է. «Մարդկային ընդհանուր բնությունն այնպես վերափոխելու համար, որ նա աշխատանքի մի որոշ ճյուղի մեջ պատ-

րատուվելու և հմտութուն ձեռք բերի, զարգացած և առանձնահատուկ աշխատութիւններ իրականացնելու, պահանջները է որոշ կրթութիւն կամ դաստիարակութիւն...» (5, էջ 182—183):

Ինչնորոգ հնգամյակում մեր երկիրը գրեթէ համատարած կերպով անցավ ընդհանուր միջնակարգ կրթութիւն: Դա մեծագույն նվաճում է ընդհանրապէս հասարակութեան պատմական զարգացման պրոցեսում և մասնավորապէս տասներորդ հնգամյակի գլխավոր տնտեսական խնդրի իրականացման գործում:

Աշխատավորների հանրակրթական մակարդակի բարձրացումն ապահովում է աշխատանքի արտադրողականութեան աճի բարձր տեմպեր: Այսպէս, ուսումնասիրութիւնները ցույց են տալիս, որ միջնակարգ կրթութիւն ունեցող քանակները երկու անգամ ավելի արագ են կատարում նոր օպերացիաները, արդյունավետ օգտագործում հարմարանքները, ակտիվ մասնակցում ռացիոնալիզատորական աշխատանքներին, քան ավելի պակաս հանրակրթական մակարդակ ունեցողները:

Աշխատավորների որակավորման և կուլտուր-տեխնիկական մակարդակի բարձրացման դործում առանձնահատուկ նշանակութիւն ունեն պրոֆեսիոնալ-տեխնիկական ուսումնարանները և բարձրագույն ուսումնական հաստատութիւնները: Գնալով ավելի ու ավելի է աճում պրոֆեսիոնալ-տեխնիկական ուսումնարաններն ավարտող մասնագետների թիւը: Այսպէս, 1965 թ. 1100,4 հազար մասնագետի դիմաց 1973 թ. երկրում պրոֆեսիոնալ որակավորում են ստացել 1886,6 հազար մարդ: Այդ ժամանակաշրջանում մեր հանրապետութիւնում պրոֆեսիոնալ-տեխնիկական ուսումնարանների շրջանավարտների աճի տեմպերը գերազանցում են միջին միութենականին և համապատասխանաբար կազմում 1965 թ.՝ 8,5 հազար մարդ և 1973 թ.՝ 20,0 հազար մարդ (7, էջ 134—135):

Վերջին տասնամյակը բնութագրական է գիտութեան և տեխնիկայի բուն զարգացումով, որի հետևանքով էլ ավելի է աճում բարձրագույն կրթութեամբ մասնագետների պահանջարկը:

Ընթացիկ հնգամյակում նախատեսվում է հանրակրթական դպրոցի հետագա զարգացում: Բանվոր դասակարգի նոր համալրման զգալի մասը կպատրաստվի տեխնիկական ուսումնարաններում, որտեղ պրոֆեսիոնալ ուսուցումը զուգորդվում է միջնակարգ կրթութեան հետ: Կավելանա որակյալ մասնագետների թիւը ժողովրդական տնտեսութեան մեջ, հատկապէս գիտութեան ու տեխնիկայի նոր ուղղութիւնների գծով: Բոլոր կարգի ուսումնական հաստատութիւններում կբարելավվի նյութական բազան, կկատարելագործվի ուսումնական պրոցեսը, այն հաշվով, որ երիտասարդ սերունդը ստանա ավելի խոր ու կայուն գիտելիքներ և դաստիարակվի կոմունիստական գիտակցութեան ու բարոյականութեան ոգով (4, էջ 24—25):

Ժամանակակից գիտատեխնիկական հեղափոխութիւնը փոփոխում է աշխատանքի բովանդակութիւնը և զգալիորեն բարձրացնում աշխատութեան կատարման եղանակները: Այն նպաստում է որակյալ աշխատանքի օգտագործման ոլորտի ընդլայնմանը, հասարակական ամբողջական աշխատանքային ժախտումների մեջ մեծացնում մտավոր աշխատանքի բաժինը:

Սոցիալիստական հասարակարգում կադրերի պատրաստման և վերապատրաստման սխեմաի ինտենսիվ զարգացումը մի կողմից նպաստում է

գիտատեխնիկական հեղափոխության իրականացմանը, մյուս կողմից էլ նրա անմիջական արդյունքն է: Դրա համար էլ ներկայումս կրթության սիստեմի կատարելագործումը և նրա սոցիալ-տնտեսական արդյունավետության բարձրացումը առանձնահատուկ կարևորություն է ստացել:

Մասնագետ կադրերի պատրաստման և վերապատրաստման գործում պետք է հաշվի առնել ժամանակակից գիտության և տեխնիկայի նվաճումները: Գիտատեխնիկական ինֆորմացիայի ծավալի արագ աճը պահանջում է անընդհատ թարմացնել ուսումնական նյութերը, փոփոխել ուսուցման ձևերն ու մեթոդները:

Գիտատեխնիկական հեղափոխության պահանջներին համապատասխան կադրերի պատրաստման և վերապատրաստման սիստեմի կատարելագործումը միաժամանակ կնպաստի ինչպես գիտության և տեխնիկայի հետագա զարգացմանը, այնպես էլ այդ նվաճումների ավելի ու ավելի արդյունավետ օգտագործմանը:

Գիտատեխնիկական հեղափոխությունը ներգործում է որակյալ կադրերի կառուցվածքային փոփոխությունների վրա: Ծագում և զարգանում են արտադրության և արդյունավետության նոր տեսակներ ու ճյուղեր: Դրա հետ կապված փոփոխվում է աշխատանքի բնույթը և բովանդակությունը, ծագում են նոր մասնագիտություններ:

Ժամանակակից մասնագետի ձևավորումը, արտադրության պրոցեսում նրա տեղը և դերը կախված չեն միայն նյութական պայմաններից: Կարևոր նշանակություն ունեն նաև սոցիալական հարաբերությունները: Այս տեսակետից սոցիալիստական արտադրական հարաբերությունները մեծ հնարավորություններ են ստեղծում ժամանակակից մասնագետի ձևավորման համար:

Գիտատեխնիկական հեղափոխության պայմաններում արտադրության պրոցեսի վազմակերպումը և կառավարումը պահանջում են նոր տիպի կադրեր, որոնք պետք է ունենան տեսական և գործնական խոր գիտելիքներ, որի շնորհիվ նրանք վստիքապետեն գիտատեխնիկական հեղափոխության նորագույն նվաճումներին, հասարակական և տեխնիկական խնդիրների լուծման գործում կցուցաբերեն ստեղծագործական մոտեցում:

Այս պահանջներին համապատասխան կրթության սիստեմի հետագա կատարելագործումը պետք է էլ ավելի մեծ չափերով ապահովի անհատի բազմակողմանի զարգացումը, նրա անձնական շահերի ճիշտ զուգակցումը հասարակականի հետ:

Հանրակրթական միջնակարգ դպրոցի շրջանավարտը պետք է պարաստված լինի ոչ միայն բարձրագույն ուսումնական հաստատություններ ընդունվելու, այլև արտադրության մեջ աշխատելու համար: Հանրակրթական դպրոցը պետք է կատարելագործել այնպես, որ շրջանավարտներն ստանան խոր գիտելիքներ տեխնիկայի, տեխնոլոգիայի և աշխատանքի գիտական կազմակերպման վերաբերյալ, ուսուցման պրոցեսում առանձնահատուկ ուշադրություն դարձնելով աշխատանքային դաստիարակության հարցին, ըստ ամենայնի հաշվի առնելով նաև գիտատեխնիկական հեղափոխության հեռանկարները:

Տեխնիկական գիտելիքների մակարդակի բարձրացման պահանջը բխում է արտադրության պրոցեսների համալիր մեքենայացման և ավտոմատացման զարգացումից: Միջնակարգ կրթություն և արտադրական փորձ ունեցող

բանվորը պետք է կատարի արտադրության ավտոմատ գծերի կարգավորման լարման աշխատանքներ: Աշխատանքի գործիքների բարդությունը, ինչպես նաև դրանց բարձր արժեքը աշխատողներից պահանջում են տեսական և գործնական գիտելիքների բարձր մակարդակ, որից մեծ չափերով կախված է ավտոմատ հարմարանքների օգտագործման արդյունավետությունը:

Ներկայումս բարձրագույն դպրոցի հիմնական ֆունկցիան կադրերի պատրաստումը և դաստիարակությունն է: Սակայն գիտատեխնիկական հեղափոխության և արտադրության արդյունավետության բարձրացման պահանջները ապահովելու համար ժամանակակից բարձրագույն դպրոցը պետք է սկսի և արդյունավետ մասնակցություն ունենա նաև գիտության հետագա զարգացմանը և արտադրության մեջ նրա նվաճումների արմատավորմանը: Այս տեսակետից այսօր արդեն բարձրանում է հիմնարկ-ձեռնարկությունների (արտադրական միավորումների պատասխանատվությունը մասնագետ կադրերի պատրաստման և վերապատրաստման գործում):

Բարձրագույն ուսումնական հաստատություններում բարձրորակ կադրերի պատրաստումը պահանջում է ուսուցման պրոցեսը համատեղել գիտատեխնիկական աշխատանքների կատարման հետ: Դրանից հետևում է, որ պետք է բարձր հիմքերի վրա դնել բարձրագույն ուսումնական հաստատությունների, գիտահետազոտական ինստիտուտների, ինչպես նաև խոշոր արտադրական միավորումների կապերը, համապատասխան բուհերի բազայի վրա ստեղծելու խոշոր գիտական կենտրոններ: Այդպիսի գիտական կենտրոններ կարելի է ստեղծել, օրինակ, Երևանի պետական համալսարանի քիմիական ֆակուլտետի և պոլիտեխնիկական ինստիտուտի էլեկտրատեխնիկական ֆակուլտետի բազայի վրա, քանի որ Երևանի տնտեսական շրջանում արագ զարգացում են ստացել քիմիական և էլեկտրատեխնիկական արդյունաբերությունը:

Հասարակական արտադրության արդյունավետության հետագա բարձրացումը պահանջում են բուհերի և արդյունաբերական ձեռնարկությունների համագործակցություն, որը, մեր կարծիքով, պետք է զարգանա հետևյալ ուղղություններով՝ արտադրության պահանջներին համապատասխան կադրերի պատրաստման և վերապատրաստման նոր սխեմանի մշակում և կադրակիրպում, արտադրության մեջ աշխատող մասնագետների և գիտնականների փոխադարձ օգտագործում, գիտատեխնիկական պրոբլեմների համատեղ մշակում:

ՍՍՀՄ ժողովրդական տնտեսության զարգացման 1976—1980 թթ. հիմնական ուղղությունների նախագծում առաջ քաշվող սոցիալական և տնտեսական խնդիրների լույսի տակ, գիտատեխնիկական առաջադիմության արագացման և բարձրորակ կադրերի ավելի արտադրողական օգտագործման պահանջը վճռական նշանակություն կունենա հանրային արտադրության արդյունավետության հետագա բարձրացման համար:

1 Լ. Ի. Բրեժնև, ՍՄԿԿ Կենտրոնական կոմիտեի հաշվետվությունը և կուսակցության հերթական խնդիրները ներքին և արտաքին քաղաքականության բնագավառում, Ե., 1976:

2 Ց. էնգելս, Կոմունիզմի սկզբունքները, Ե., 1959:

3 Վ. Ի. Լենին, Երկեր, Կ. 31:

4 Ա. Ն. Կոսիգին, ՍՍՀՄ ժողովրդական տնտեսության զարգացման 1976—1980 թթ. հիմնական ուղղությունները, Ե., 1976:

⁵ Ч. Ушфу, Чыңгызш, 5. 1, б., 1954.

⁶ «Вопросы экономики», 1971, № 4.

⁷ «Народное хозяйство СССР в 1973 г.». Статистический сборник, М., 1974.

⁸ «Научно-технический прогресс и производительность труда», М., 1972.

В. Е. ОВСЕПЯН — Научно-техническая революция и повышение эффективности общественного производства.— Повышение эффективности общественного производства на основе роста производительности труда, снижение материалоемкости общественного продукта, улучшение использования основных фондов, производственных мощностей и капитальных вложений неразрывно связано с ускорением темпов научно-технической революции. В этой связи в статье рассмотрены пути повышения эффективности общественного производства, диктуемые современной научно-технической революцией. Производительность труда — наиболее обобщающий показатель результативности производства, его эффективности. В условиях всесторонней интенсификации общественного производства повышение производительности труда превращается в задачу первостепенной важности. Рост производительности труда означает экономию как живого, так и овеществленного труда в масштабе всего народного хозяйства, является материальной предпосылкой непрерывного подъема социалистического производства и улучшения благосостояния трудящихся.